1
3214

№ 2000

1695-44
97798-57

ԱՐԵՏԱՐԱՆԻ
Ա՛ՐԱՐՏԱԿԻՐԹԻՆ ԵՒ ՕԳՈՐՈՒԹԻՆ ԶԱՐԱՐ։

Աւրգհանու�։

Ի հայրապետութեան Տ՚Յովհաննու Կարբեցւոյ սրբազնասուրբ Կաթուղիկոսի ամենայն հայոց։

Հրամանաւ Տեառն ՊՕՂՈՍԱՄԱՐԱՅ Իշխանաղնի Ջալալեան սրբազան Արք եպիսկոպոսի և մետրապոլտի հայոց համայն Աղուանից։

Ի ՇՈՒՇԻ
Յամի Տեառն 1833

225

Շատ ժամանակ է, որ մենք Քրիստոնեայ անունով զարդարվումենք և մեր հաճատքնսուրբ գրքերի վերայ հաստատված է։ Այ թէ և ժամանակից ժամանակ սուտ փիլիսոփաները ջանք արին որ սուրբ աստուածաշունչ գրքերի վարդապետութիւնը ծռեն և քանդեն, բայց մենք մինչև հիմիկ աստուծոյ շնորհքովն հաստատ դաւանեցինք և պահպանեցինք նորան։ Աստուածաշունչն միշտ էր մեր մանկութեան առաջնորդն և խրատողն, ծերութեան հաստատութիւնն՝ հիւանդների միխիթարութիւնն և մեռնողների մին մխնակ յոյսն։ Բայց դեռ շատ մարդիք կան, որ ջանք են անում որ մեզ յետ դարձնեն էն երկնաւոր գանձից։ Սրանք աւելի քարասիրտ թշնամի

են, քան թէ նորանք, որ զրկումեն մեզ մեր օրվան կերակրիչն և հացիցը։ Այս մի թէ կամենումէ՞ք դուք և հենց կարող է՞ք ձեր աստուածաշունչ գիրքըն թողել։ Դուք՝ որ էս ողորմելի կեանքումն մեղքով և ցաւերով լցված էք և շուտով մահի ձեռքն պիտի ընկնիք՝ կարո՞ղ էք Աստուծոյ էն խօսքըն թողել որ ձեզ կանչումէ դէպի իրան փրկութիւնն. և պատմումէ ձեզ՝ թէ աստուած էնպէս սիրեց աշխարհքս՝ մինչև որ իրան միածին որդին տուաւ. որ ամէն ով որ հաւատայ նորան՝ չըկորչի, այլ յաւիտենական կեանքըն ընդունի։ (Յոհ. գ. 16։) Ի՞նչ թէ կարող է՞ք դուք մոռանալ և թողել էն փրկիչըն, որ յաւիտենական կեանքըն տալիս է ձեզ և ասումէ։ Ես եկի որ կեանքըն ունենաք. Ես եկի որ մանգամ և ապրեցնեմ կորածըն։ (Յոհ. ժ. 10։ Ղուկ. ժբ. 11։)

Ի՞նչ էք իմանում դուք ձեր սըրտերումն երբ որ ձեր սիրելի հրեշտի գերեզմանի մօտ կանգնած՝ լսումէք

էն միխիթարող խօսքի ձայնը՝ թէ, հենց ես եմ յարութիւնն և կեանքն։ (Յօհ. ԺԱ. 25։) Ա՛ի թէ կարօղ էք էն քաղցր յուսից՝ զրկվիլ՝ որ էս խօսքերս տալիս են ձեզ։ Տրտմութեանց և նեղութեանց և հիւանդութեանց սահմանումն մի թէ կարելի՞ է մին միխիթարութիւն գտնել՝ որ հաւասար լինի էն միխիթարութեանն, որ աստուծոյ բանն տալիս է ձեզ։ Ա.ստուծոյն յայտնի ցոյց տալով ձեզ՝ որ նա ձեր ողորմած հայր է։ Ինչպէս որ հայրն ողորմումէ իրան որդոյ վերայ, էնպէս էլ Տէրն կողորմի նորանց վերայ որ իրանից վախումեն։ (Սաղմ. ՃԳ. 13։) Ա՛տիկ արէք ձեր չորս կողմանը և տեսէք թէ՝ անսանձ և անկապ փափակներն և ցանկութիւններն քանի խեղճութիւն և ապականութիւն են գործել։ Ա.պա ի՞նչպէս կարելի կըլինի որ թողէք էն երկնաւոր և հըրաշք գործող դիրքը՝ որ կատաղած գազանը գառն է շինում՝ որ սովորցնումէ մեզ որ ամէն չարութիւնն

թողենք, ողորմած և քաղցր լինինք իրար մեղք թողենք և ամէն նեղութիւն հասցնողներին ներենք և բաշխենք, Աստուծոյն բոլոր սրտով սիրենք և մեր ընկերներըն էլ մեր անձներին պէս սիրենք։ Ահա հենց էս է էն սուրբ Աստուածաշունչ գիրքն որ հակառակողներն կամենումեն ձեր ձեռքից հանել։

Յիմար և հայհոյող մարդիքն որ ձեր չորս կողմնին կան՝ չեն ամաչում ասել՝ թէ աւետարանն ճշմարիտ չէ։ Այց կարելի է աւետարանի մէջ մին էնպէսի բան գտնել՝ որ սուտ լինի, կամ ստութեան նըմանա։ Ա՞ի թէ կարող է՞ք կարծել՝ թէ առաքեալներն Յիսուսի Քրիստոսի պատմութիւնը իրանց մտքումն հնարեցին և շինեցին։ Ա՞ի թէ կարող էք նարանց սուտ ասող համարել, երբ որ նորանք էսպէս հաստատութեանով ասումեն ձեզ, թէ էն որ նորանից լսեցինք, որ նորան հենց մեր աչքերովս տեսինք, որ նորա վերայ մտիկ տուինք, և մեր ձեռնե-

ըն դիպան՝ կենաց բանին վերայ։
վկայումենք և պատմումենք ձեզ։ (Ա։
Յօհ. Ա։ 1։ 2։) Այլ եթէ նորանց
սումունքն և քարոզութիւնն ճշմա-
րիտ չըլլիներ, ապա պետրոսն ի՞նչ-
պէս կըհամարձակվէր ամէն հրեա-
ների ժողովուրդի առաջին յայտնել՝
և ասել, թէ էս Յիսուսին աստուած
յարույց որ նորան մենք ամենքս վը-
կայումենք։ (Գործ։ Բ։ 32։) Նո-
րանք էլ ոչ մէնակ համարձակութե-
նով ճշմարտութիւն էին քարոզում.
բայց նորա հաստատութեան համար
մեծամեծ հրաշքներ և նշաններ էլ
գործումէին։ Այլ էն հրաշքներըն
և նշաններըն չէ՞ թէ մի ծածուկ
տեղ էին գործում, բայց բոլոր աշ-
խարհքիս և հեռց թշնամիքների ե-
րեսի առաջին։ Այլ ի՞նչպէս կըհա-
ճանէին նորանք, որ չարչարվին և
իրանց անձներըն պատարագ տան
էնպէսի վարդապետութեան համար,
որ նորան հեռց իրանք կամ սուտ է-
լին համարում; և կամ թէ հաստա-
տութենով չէին գիտում և հաճա-

տում։ Եթէ էս ամէնս սուտ հնարված լինէր, չէ՞ որ նորանք և նորանց պատմութիւնն մին տեղ կորած կը լինէին։ Այլ թէ կարօղ էք դուք կարդալ նորանց գրքերը, որ կատարեալ աստուածապաշտութենով, պարզութենով և մարդասիրութենով լցված են, և ապա միտք անել և կարծել թէ առաքեալներն աստուծոյն համար սուտ վկայ լինին։ Լսեցէք նորանց յատուկ դաւանութիւնը. մենք ոչ թէ սուտուտուտ հնարված բաներին հետևելով ցոյց տուինք ձեզ մեր տէր Յիսուսի Քրիստոսի զօրութիւնը և գալն. բայց հենց մենք ինքներս աչքով տեսինք նորա մեծութիւնը։ (Բ. Պետրոսի. Ա. 16։)

Կարդացէք Յիսուսի Քրիստոսի կեանքի պատմութիւնը, հետևեցէք նորանց հենց նորա օրօրոցը, նորա ծնվելոյ ժամանակից մինչև նորա խաչն և գերեզմանն, և ապա կասէք։ Չէ՞ որ սա է Քրիստոսն։ (Յոհ. Դ. 29։)

Նորա ծննունդին հրեշտակներն վկայ էլան. նորանք էս ուրախացը-նող աւետիքս երկնքիցն բերին. երգեցին և ասացին. երկրի վերայ խաղաղութիւն լինի և մարդկանց մէջ հաճոյութիւն։ (Ղուկ. Բ։ 13։) Երբ որ աստուծոյ որդին էս ցած երկրումս մանուկ էլաւ՝ նորա վկայութիւնն երկնքումն էր. պաճառն որ՝ մին զարմանալի և նոր աստղ երևեցաւ, որ նորա համար վկայ էլաւ երկնքումն։ Արևելքիցն եկած իմաստուն մոգերն նորա համար վկայ էին՝ երբ որ հեռու երկրիցն էն ծընված երեխայի մօտ եկին, և նորան իբր հրեշտ թագաւորին ոսկի, կընդրուկ և զմուռ ընծայ բերին։ (Մատթ. Բ. 11,) Սիմէօնն և անանան՝ որ տաճարումն էին, մարգարէութեան հոգովն սուրբ Յիսուս երեխայի աստուածութեանն վկայութիւնտուին էն վարդապետներն, որ նա իրան տասն երկու տարեկան էլած ժամանակն նորանց հետ խօսակցութիւն արաւ՝ վկայեցին. որ նորանում աւե-

լի մեծ փառք կար քան թէ մէնակ մարդկութիւն։ Նորա մկրտութեան ժամանակումն, հայրն և սուրբ հոգին վկայութիւն տուին աստուծոյ որդոյն. թէ նա է էն խոստացած մեսիան։ Հայրն երկնքէն ձայնով կանչեց և ասաց. թէ դա է իմ սիրելի որդին որ դորան հաճան կացայ։ Նէ սուրբ հոգին աղաւնոյ կերպարանքով երկնքէն վէր եկաւ նորա վերայ։ Նորա կեանքն լցված էր հըրաշքներով, և նորանցից ամէն մէկն վկայեց և հաստատեց՝ թէ նա հօրէն ուղարկվեցաւ և թէ նորա վարդապետութիւնն աստուածային և ճշմարիտ է։ Ամէն մէկ կոյր՝ որ տեսաւ, և ամէն մէկ մեռեալ՝ որ նորա ձեռքն յարութիւն առաւ՝ վկայ էլան նորա համար։ Հրաշագործութիւններն միշտ և միշտ նորանով էլան մինչև որ նորա խաչելութեան ժամանակն և ապա գերեզմանն էլ բացվաւ՝ որ շ իտակվաց և պատրաստվաց ձանապարհով դուրս գայ և վերանայ դէպի հայրն. և նորա աջ կողմ-

մըն նատի։ Այն փրկութիւնն, որ ըս-
կզբումն Տէր Յիսուս Քրիստոսէն
քարոզվեցաւ, յետոյ հաստատվեցաւ
նորանց ձեռնովն՝ որ լսեցին նորան.
և ինքն Աստուած վկայեց նորան
նշաններով և հրաշքներով և կերպ
կերպ զօրութիւններով։ (Եբրայեց.
Բ.)

Ասիկ արէք Յիսուսի Քրիստո-
սի վարքին. մի թէ նորանում մին
բան կըգտնէք որ մին խաբօղ մար-
դոյ նման լինի։ Քահանայապետնե-
րի էն ծառաներն ասացին. թէ իսկի
մին ժամանակ մին մարդ էնպէս չը-
խօսեց, ինչպէս որ էն մարդն։ (Յօհ.
Է։) Կարդացէք էն շնորհքով լը-
ված խօսքերըն, որ յայտնումեն մեզ՝
թէ Աստուած որքան հաճոյ էր կե-
նում նորան և թէ ինքն որքան մարդ-
կանց սիրումէր։ Տէրի հոգին ինձ
վերայ է. և հետց նորա համար էլ
օծեց ինձ. նա ինձ ուղարկեց աղ-
քատներին աւետիք տալ, սրտով կո-
տրվածներին բժշկել. գերիներին
թողութիւն քարոզել, և կուրերին

տեսութիւն. խոցվածներին արձակել դէպի թողութիւն. Տէրի ընդունելի տարին քարոզել։ (Նաայ. կա. 1։) Այ, նա էլ լաւ կարող էր ասել. թէ էս օր էս գիրքս կատարվեցաւ ձեր ականջներումն։ (Ղուկ. ԺԴ. 18. 19. 20։) Մենք լսումենք նորա քաղցը ձայնը, որ վաստակված և մեղքի ծանրութեունից նեղացած մեղաւորներին կանչեց և ասաց. թէ ինձ մօտ եկէք և ես հանգիստ կըտամ ձեզ։ (Մատթ. ԺԱ. 29։) Ա՛յ որ ինձ մօտ է գալ իմ՝ ես դուրս չեմ հանիլ նորան։ (Յօհ. Զ.) Խաղաղութիւն եմ թողում ձեզ. իմ խաղաղութիւնը եմ տալ իս ձեզ։ Ձեր սրտերդ չըշփոթվիլն և չըվախենան։ (Յօհան. ԺԴ. 27։)

Աղքատներին աւետարան էր քարոզում։ և խոնարհներին իրան արքայութիւնը էր խոստանում։ Ա՛յ ասաց. երանի՛ հոգով աղքատներին, որ նորանոյն է երկնքի արքայութիւնը։ Երանի՛ նորանց, որ սոված և ծարաւ են արդարութեան համար,

որ նորանք պէտի կը շտանան։ (Առակ. Ե. 3. 6։) Երանի նորանց որ հլմիկ սովաձ են՝ որ պէտի կը շտանան։ (Ղուկ. Ը. 21։) Ով որ ինձ մօտ է գալիս՝ չի սովիր և ով որ ինձ հաճատումէ՝ իսկի մին ժամանակ չի ծարաւիր։ Աստեղ աշխարհքումս նեղութիւն կունենաք, բայց սրտապինտ կացէք. ինչու որ ես աշխարհքին յաղթեցի։ (Յոհ. Ղ. 35։ ԺԶ. 33։)

Երբ որ կաղերն, կուրերն և խուլերն (փաւէրն) նորա վերայ կիտվեցան, մի թէ նա իրան երեսըն յետ դարձրուց նորանցից։ Իսկի չէ. բայց նա էր նորանց բժիշկն. նա խաղաւումէր նորանց վերայ և նորանց ամէն ցաւերըն բժշկումէր։ Նա լաց լինողներին հետ լաց էր լինում։ Երբ որ նա պատահեցաւ էն որբևէրի կնկանըն, որ նորա միածնուդ որդին գերեզմանն էին տանում իրան խեղձըն եկաւ նորա վերայ, և ասաց. լաց մի լիներ, և մեռեալ որդոյն կենդանացրուց, և իրան մօտն տուաւ և նորանք որ անց էին կենում և

տեսնում՝ փառաւորումին Աստուծոյն։ Այս մեր եկաւ բարի անելոյ համար։

Այ ի՞նչպէս էին էն վարքերն՝ որ նա ցոյց տուաւ։ Նա հեզահոգի և սրտով խոնարհ էր, որ երբ որ բամբասվումը, ինքն նորա տեղակ չէր բամբասում։ Հարչարվումը և ոխ չէր պահում, (Ա՝ Պետ. Ժ՚. 29։ Ա՚. Պետ. Բ։ 23։) Հենց խաչի վերայ էլ նորա խօսքն էն էր՝ թէ հայր՝ թողութիւն տուր դորանց. ինչու՞ որ չեն գիտում, թէ ինչ են անում։ (Ղուկ. Իգ. 34։) Այս իրան աշակերտների ոտները լուացի, և ապա էս ասաց նորանց։ Այս ձեզ մին օրինակ տուի, որ ինչպէս ես ձեզ արի, դուք էլ էնպէս անէք։ (Յոհ. Ժգ. 15։)

Տեսէք թէ նա ի՞նչպիսի գեղեցիկ առակներով սովորցնում է և ցոյց է տալիս մեզ երկնաւոր հօր քաղցրութիւնը. կարդացէք էն առակները որ մոլորված ոչխարին և անառակ որդոյն համար ասաց. և ապա դուք

էլ կասէք՝ վերը կենամ գնամ իմ հորը մօտ, (Ղուկ. ԺԵ. 18։) Կարդացէք էն առակն՝ որ էն փարիսեցոյն և մաքսաւորին համար ասաց, և խոնարհութիւն սովորեցէք որ ամէն ամբարտաւանութիւն դուրս հանէք ձեր սրտերից։

Ասպէս էր Յիսուսի Քրիստոսի կեանքն, էսպէս քաղցրութեամով լցված էր նորա վարդապետութիւնն։ Ապա հիմիկ եկէք նորա ետևէն մինչև նորա խաչվելոյ տեղն և տեսէք թէ ի՞նչպէս մեռաւ նա։

Կարդացէք նորա վերջին խօսքերը՝ որ իրան աշակերտներին հետ արաւ։ Որաւ՝ որ քարից աւելի պինտ կըլինի էն սիրան, որ նորա սիրովն և քաղցրութեանովն չըշարժվի և հալվի։ Ձեր սրտերդ թող չըշփոթվին. բայց աստուծոյն հաւատացէք և ինձ հաւատացէք։ Իմ հորս տանն շատ բնակարաններ կան. ապա թէ չէր. ես ձեզ ասած կըլինէի որ կըգնամ և ձեզ համար տեղ կըպատրաստեմ. մին էլ կըգամ և ձեզ

ինձ մօտ կառնեմ։ որ տեղ որ ես լինիմ։ Հնտեղ էլ դուք լինիք։ (Յօհ. ԺԴ. 1. 2. 3.) Ո՛չ ով աւելի մեծ սէր չունի, քան թէ էն՝ որ իրան անձըն դնէ իրան բարեկամներին վերայ։ Դուք իմ բարեկամներս էք՝ թէ որ անէք էն որ ես պատուիրում եմ ձեզ։ (Յօհ. ԺԵ. 13. 14։) Հայր, նորանք՝ որ դուռ ինձ տուիր, կամենում եմ որ՝ ինչ տեղ որ ես եմ, նորանք էլ ինձ հետ լինին. որ իմ փառքըս տեսնեն։ (Յօհ. ԺԷ. 24։) Տես՝ք նորան սեղան նստած ժամանակն, որ վերջին անգամն պասէքըն իրան աշակերտներին հետ ուտէ. և թէ ինչպէս սիրով ասաց նորանց. ցանկանալով ցանկացայ. որ էս պասէքըս ձեզ հետ ուտեմ, իմ չարչարվելուցն առաջ։ (Ղուկ. ԻԲ. 15։) Լսեցէ՛ք էն կտակըն (վասիոնըն) որ նա տուաւ նորանց ասելով։ Լս արէ՛ք իմ յիշատակիս համար։ (Ղուկ. ԻԲ. 19։) Լոսպէս հրաժարվեցաւ նա իրան բարեկամներիցն, և գնաց, որ դառն չարչարանաց բաժակըն (ըռուքն)

խմէ։ Կարդայէք էն խօսքերը՝ որ նորա հոգոյ անասելի սասսիկ տըրտմութիւնը և չարչարանքը և երկնաւոր հօր կամացն կատարեալ հընազանդ լինելն ցոյց են տալիս։ որ ինքն ասաց հայր եթէ կամենումես, էս բաժակս (ՊՈՍՔ) անցկացրու ինձանից. միայն թէ ոչ իմ կամքս, բայց քո կամքդ լինի։ (Ղուկ. ԺԲ. 42։)

Տեսէք նորան՝ որ ոչխարի պէս մորթվելոյ տեղն տարվաւ, և կամ ինչպէս բարի հովիւ՝ որ իրան անձն դնումէ ոչխարներին վերայ։ Ինչու որ՝ նա մեր մեղքերին համար խոցվեցաւ և մեր անօրէնութիւններին համար պատժվեցաւ, և մեր՝ նորա խոցերովն բժշկվեցանք։ (Ես. ԾԳ. 5։) Տեսէք, թէ նա ինչպէս տըրտմումէ մեղաւորներին համար, աղօթք է անում իրան սպանողներին համար, թողութիւն է տալիս էն ղղջացած և մեռնող աւազակին, և իրան չարչարանքներին մէջն կանչումէ. թէ ամէն բան կատարվաց է. հայր՝ իմ հոգիս քո ձեռքդ եմ յանձնում։ (Ղուկ.

Եգ. 46։) Ապա դուք որ էսպէս տեսնումէք Աստուծոյ գառը՝ որ աշխարհքի մեղքերը՝ վեր է առնում, չէ՞ որ դուք էլ պատրաստ էք բարձը ձայնով կանչել՝ թէ արժանի է գառնդ՝ որ մորթված է՝ որ մեծութիւն և իմաստութիւն և զօրութիւն և պատիւ և փառք և օրհնութիւն առնէ։ (Յայտն. Ե. 12։) Յետոյ նորա ետևէն եկէք գերեզմանն և տեսէք էն տեղը՝ որ Տէրն կար։ (Մատթ. ԻԸ. 6։)

Տեսէք նորան գերեզմանից՝ յարութիւն առած՝ իբր ննջածների (ննջածներէ) առաջինեկ պտուղն։ (Ա. Կորն. ԺԵ. 20։) Ուրախ էլէք էն խաստմունքովը՝ որ նա տալիս է իրան հետևողներին՝ թէ ես կենդանի եմ և դուք էլ կենդանի պիտի լինիք։ (Յոհ. ԺԴ. 19։) Ես վեր եմ էլլում իմ հօր մօտ և ձեր հօր մօտ. իմ աստուծոյ մօտ և ձեր աստուծոյ մօտ։ (Յոհ. Ե. 17։) Յետոյ մին քանի ժամանակ դեռ էս երկրումն մնայ իրան աշակերտներին հետ խօսելոյ՝ նորանց

սովորցրուց, նորանց միտքըն բաց ա-
րաւ, որ սուրբ գրքերըն իմանան,
նորանց խօսք տուաւ, որ սուրբ հո-
գին ուղարկէ և նորանց աստուածայ-
ին զօրութեանով լցնէ. և ապա նո-
րանց հանեց մինչև Բեթանիա. և ի-
րան ձեռներըն բարձրացրուց և նո-
րանց օրհնեց։ Եւ էլաւ դեռ քանի
որ նա օրհնումէր՝ հեռացաւ նորան-
ցից և դէպի երկինքն վերանումէր։
(Ղուկ. Գլ. 40. 50. 51։)

Ապա իմ բարեկամներս. դուք հի-
միկ Յիսուսի Քրիստոսի համար ինչ
էք մտածում։ Ի՞նչ թէ դուք կամե-
նումէ՞ք թողել նորան։ Նա հենց
ձեզ էլ էնպէս հարցնումէ, ինչպէս
իրան աշակերտներին։ Ի՞նչ թէ դուք
էլ կամենումէ՞ք գնալ։ (Յօհ. Զ. 68։)
Այ՞ ո՞ր ձեր սրտերն էսպէս են պա-
տասխան տալիս. թէ ո՞ւմ մօտ գը-
նանք. դու յաւիտենական կենաց խօս-
քեր ունիս։ (Յօհ. Զ. 69։) Այ մենք
քեզանից չենք հեռանալ թէ և քո
վրդապետութիւնդ մին քանիսին հա-
մար յիմարութիւն լինի. բայց մեզ

համար Աստուծոյ զօրութիւն և ոյժ իմաստութիւն է։ (Ա. Կորն. Ա. 23. 24։)
Ով օրհնեալ Յիսուս՝ դու ես արդարութեան արեգակն և լոյսն, մենք չենք կարող քո լոյսըն խաւարի հետ փոխել։ Մենք իմանումենք որ մեր մեղքն և պատժապարտութիւնն մեծ է, շատ կարօտ ենք որ քո միջնորդութենովն և քահանայապետութենովն մեր մեղքերն քաւեսս։ Մեր ապականված բնութիւնն կարօտ է քո շնորհաց զօրութեանըն որ սրբվի. մեր տկարացած բնութիւնն կարօտ է քո տուրբ հոգոյ օգնութեանն, և մեր մեռնող բնութիւնն կարօտ է կեանքի և անմահութեան էն ամէն յուսոյն, որ դու տուել ես մեզ։ Այլ. մենք չենք կարող թողել քեզ. էս կեանքիս ամէն նեղութիւնների և փորձանքների մէջն մենք միշտ մտիկ կըտանք քեզ՝ որ խաչի մահվն համբերեցիր և էս աշխարհքիս յաղթեցիր։ Դու ես մեր փրկութեան զորագլուխն (առաջնորդն) և կատարողն, և քո շնորհքովդ կըհետևինք քեզ

խաչի Ճանապարհումն, մինչև որ խաչաւ յաղթենք և քեզ հետ նստենք քո աթոռի վերայ, ինչպէս որ դու յաղթեցիր և նստեցիր քո հօր աթոռն։

Ապա հիմիկ՝ որ տեսել ենք, թէ Յիսուսի Քրիստոսի աւետարանն ի՞նչպէս ամէն միխիթարութեան և երանութեան քաղցր ուսմունքովն լիքըն է, մի թէ հաստատ մտքով յոժար չէ՞ք որ նորան էս կեանքիս մէջըն մի միայն առաջնորդ ընտրէք, որ ձեզ յաւիտենական երանութեան մէջ տանի։ Այ. դուք հաստատ ցանկանումէք որ միշտ Քրիստոնեայ կանչվէք. բայց Քրիստոնէի անունըն ձեզ չի փրկիր։ Աւետարանն պէտք է որ ձեր սրտի մէջ տպված և գրված լինի. ապա թէ չէ. էն միխիթարութիւն չի տալ ձեզ էս կեանքիս մէջն, և ոչ յոյս՝ մեռնելոյ ժամանակումն։ Դուք պէտք է յատուկ իմանաք ձեր սրտերումն որ աւետարանն Աստուծոյ զօրութիւնն է ձեր փրկութիւնըն տկարութեան մէջ

գործելոյ համար։ Եվ որ աւետարանն ձեր հոգոյ մէջն կենդանի հաւատք և հաստատ յոյս և ջերմեռանդ սէր և սրբութիւն է ծնել, եթէ ձեր սրտերն էս երկրաւոր և աշխարհական բաներից յետ է դարձրել դէպի էն երկնաւոր և աստուածային բաներն. և եթէ ձեր բնութեան մեղաւոր ցանկութիւնները հնազանդացրել է և մեռցրել. ապա էդպէսի փոփոխմունք հաստատ վկայութիւն կըլինի ձեզ համար, որ էս աւետարանս աստուածային է։ Ինչու համար էնքան շատ մարդիք խայտառակ արին էն աւետարանն՝ որ դաւանում են. ինչու շատ ուրիշներ յետ են դառնում նորանից, նորա երկնաւոր վարդապետութենից և ուրանում են նորան։ Նրա համար որ՝ նորանք խակի մին ժամանակ Ճշմարիտ Քրիստոնեայ չէլան։ Ապա ձեր սրտի միջի տպագրված աւետարանն ամէնից շատ պինտ զօրութիւն և պահպանութիւն կըլինի ձեզ համար՝ որ ամէն հակառակողների նետե-

ըրն կարենանք կըտրել և փրշ-
ըել։

Այս աշխարհքումս որ վիճակի մէջ
որ լինիք՝ միշտ ձեր չորս կողմանքն
մարդիք կը լինին, որ էնքան ամբա-
րիշտ են, մինչև որ՝ Աստուծոյն
անարգեն, կամ թէ ջանք անեն՝ որ
աղուհով լցված ծաղրաբանութեանով
կամ թալակ քցելով հեռացնեն ձեզ
նորանից։ Ոչ որ նորանք հարցնեն
ձեզ՝ թէ ինչպէս կարող էք դուք
գիտել, թէ Քրիստոնէական հա-
ւատքն ճշմարիտ է. և թէ ինչպէ-
սի վկայութիւն ունիք դուք որ նա
աստուածանից է վերը եկել. ապա
բաւական չէ որ մինակ ասէք, թէ
էդ մեր հայրենական հաւատքն և օ-
րէնքն է, և մենք նորանում ենք ծըն-
ված և մեծացած։ Ոչ և դուք կա-
րոզութիւն չունենաք որ ձեր հա-
ւատքն գիտուն և խելացի մարդկանց
իմաստութեանովն ցոյց տաք և պահէք
բայց կարող պիտի լինիք որ հեռց
անհաւատ մարդկանց առաջին էլ
համարձակ պարձենաք և ասէք, ես

աւեաարանելն ամօթ չեմ համարում։
պատճառն որ աստուծոյ զօրութիւն է
իմ հոգիս փրկելոյ համար։ Նա իմ
սիրաս յորդորեց և շարժեց դէպի ա-
պաշխարութիւն. և իմ ապականված
բնութիւնըս փոխեց. նա իմ մեղքով
տանջված խղճմտանքըս հանգստացը-
ցուց և հաստատ յոյս տուաւ ինձ որ
Յիսուսի Քրիստոսի չարչարանքովն և
արդիւնքովն մեղաց թողութիւն ըս-
տանամ։ Նա յաւիտենական կենաց
հիմն դրաւ և հաստատեց ինձանում
ապա ինչպէս կարելի է որ ձեր
ծաղրաբանութիւններն հեռացնեն և
չ կեն ինձ դորանից։ Օհ և ես չեմ
կարող որ Աստուածաշունչ գրքի
դժուար իմանալի բաներըն մեկնեմ,
կամ թէ յոյժն ի ցոյց տամ, որ նորա.
մէջի ամէն մէկ խօսք աստուածային
է, բայց էնպէս էլ ամէնից շատ հաս-
տատ գիտումեմ, որ էնպէսի վարդա-
պետութիւնն, որ էդքան մեծ և զո-
ւրաւոր փոփոխութիւն գործեց իմ հո-
գոյ մէջ, պէտք է աստուածանից է-
կած լինի։ Նա իմ հաւատքըս սուրբ

գրքերի մաքի և զօրութեան վերայ եմ հաստատում, և չէ թէ նորա տառերին և գրերին վերայ։ Այս շատ շնորհակալ եմ էն գիտուն մարդկանցից, որ անհաւատների դեմերն փշրումեն և աւետարանի զօրութիւնըն ցոյց են տալիս. բայց էլ աւելի աստուածանից եմ շնորհակալ, որ իմ հաւատքս և յոյսս ոչ թէ մէնակ մին քանի խօսքի դրսի և զուր գիտութեան վերայ հաստատված է, բայց բոլոր աւետարանի Աշմարիտ մտքին վերայ։ Սուրբ գրքերի ամէն թարգմանութիւն հենց էն աստուածային Աշմարտութիւնըն է ցոյց տալիս՝ թէ Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ որ մեղաւորներըն փրկէ. և ամէն թարգմանութիւն հաստատումէ իմ յոյսը, և յորդորումէ ինձ որ իմ սրտի սրբութեանն ջերմեռանդութենով հետևիմ։

Ոչ որ մին փիլիսոփայ ջանք անէ որ ցոյց տայ, թէ հոգն անպէտք է մարդոյ մարմինըն կերակրելոյ համար, կամ թէ ջուրն անօգուտ է

մարդոյ ծարաւութիւնը հովացնելոյ համար. ապա ես շատ համարձակ կը-կարենամ ցոյց տալ որ հայի և ջրի օգուտն մեծ է. պատճառն որ՝ ես ամէն օր հացով եմ կերակրվում, և իմ ծարաւութիւնը միշտ ջրով եմ հովացնում։ Հենց էսպէս էլ մեծ փիլիսոփաների կարծիքներն և խօսքերը ոչինչ չեն կարող գործել էն Քրիստոնեայի դէմ։ որ կենդանի հաւատքով աստուծոյ քաղցրութեանն փորձ առաւ և օրեցօր հաւատքով ապրում։ Այս հաստատ ասում է թէ Քրիստոս է իմ հոգոյ հացն. ապա ես չեմ կարող թողել և դէն քցել էն հացը՝ որ իմ հոգոյս կեանք է տալիս։

Ասումեն ինձ՝ թէ իմ հաւատքիս մէջն խրհուրդներ կան. բայց ես չի կարող իմ հաւատքս թուլացնել Այս աշխարհքիս բնութեան մէջ ամէն կերպ խորհուրդներ կան. ապա ինչու համար շնորհայ արքայութիւնն իրան վարդապետութեան մէջն էնպէսի բաներ չի ունենալ՝ որ իմ տկար իմա-

ցողութեանովն չեմ կարող հասկանալ։ Արախան իսկի էն ամէնը չի կարող իմանալ որ նորա ողորմած հայրը պատրաստումէ նորա համար՝ որ յետոյ իրան մեծացած լինելոյ ժամանակումն երանելի դառնայ։ Այս էստեղ աշխարհքումս մէնակ իմ լինելոյ սկիզբն է և նրա համար դեռ չեմ կարող որ աստուծոյ ճանապարհն և նորա քաղցրութիւնը կատարելապէս իմանամ։ Բայց նա բաւականապէս յայտնութիւն տուաւ ինձ, որ հաւատամ նորա սիրոյն և հաւատարմութեանն՝ որ ինձ վերայ ունի. սրա համար էլ կարող եմ իմ երկնաւոր հօր վերայ յոյս դնելոյ որ յետոյ մին ժամանակ էն էլ իմանալու լինիմ որ հիմիկ չեմ գիտում։ Պատճառն որ՝ ես գիտումեմ թէ ում եմ հաւատացել։

Այսէ՛ք հիմիկ տեսնենք և մեր անձ. ներիս հարցնենք՝ թէ մենք աւետարանն և Քրիստոնէական հաւատքի ճշմարտութիւնը ի՞նչպէս փառաւորեցինք և պատուեցինք։ Այ՞

որ շատ կան որ աստուծոյ Աշխարհութիւնը անիրաւութենով խափանումեն։ Օ՛հ երանի՛ թէ իմանան և մտքներն առնեն, թէ իրանք Յիսուսի Քրիստոսի խաչին դէմ թշնամի են, Ո՛վ ամբարիշտներ՝ որ Քրիստոնեայ և ամենասուրբ Քրիստոսի հետևող էք կոչվում։ չէ՞ որ պէտք է ձեզ հեթանոսների առաջին ամօթ քաշել Երաւի որ ահաւոր դատաստանի օրումն շատ աւելի հեշտ կըլինի նորանց համար՝ որ Քրիստոսին չեն գիտում. քան թէ են քրիստոնեաներին համար որ աւետարանը մէնակ պուօշներով են դաւանում, բայց իրան գործքերովն նորա սուրբ անունը խայտառակ են անում։ Սրա համար շատ յանկանումենք որ դեռ հիմիկ ձեր էն փրկչի մօտն տանենք, որ կանչում է ձեզ դէպի իրան ողորմութիւն, և էլ պատրաստ է, որ հենց ։ն թշնամոյն էլ թողութիւն տայ որ իրան տրտմացրուց և խոյեց։ Երեսցվեցէք և սրբվեցէք ձեր չարութենից դադարե-

ցէք. սովորեցէ՛ք որ բարին գործէք։ Այժ եղէ ձեր մեղքերն մուրի պէս սև լինին՝ ձիւնի պէս սպիտակ կանեմ, (Եսայ. ա. 16. 12։) Այն ժամանակն դուք էլ կը լսէք էն ձայնը՝, որ ասումէ. դուք էնպէսիներ էիք, բայց լուացվեցաք, բայց սրբվեցաք, բայց արդարացաք մեր տէր Յի Քրէ անունովն և մեր աստուծոյ հոգովն։ (ա. Կորն. զ. 11։)

Ի՞նչ թէ կամենումէ՞ք որ աւետարանը փառաւորէք և մարդկանց մէջը փուէք և տարածէք։ Ա.պա թող էն յաւիտենական կեանքն, որ ձեր հոգոյ մէջն աւետարանի ձեռովն գործված է՝ ձեր բոլոր գործքերումն և վարքերումն երևի և մարդկանց մէջն յայտնվի։

Երբ որ ձեր չորս կողմով բնակված մարդիքն տեսնեն ձեր հաւատքն և սէ՛ վարքն. ձեր ուծապաշտ նախանձն և սէրն որ Յի վերայ է. և էն հեզուէն և քաղցրուէն որ ամէն մարդկանց վերայ ունիք և էն ջերմեռանդցանկուէն՝ որ նորանց փրկուէ ձանա-

պարհն տանէք՝ և ձեր սրտի էն յօժար պատրաստուէ, որ ձեր անձն ուրանաք նորանոյ օգնուէ ասելոյ համար. էն ժամանակն նորանք էլ հաւատք կըգան և էն երկնաւոր վարդապետուէն և նը ամէն պատուիրանքներն կըդու�և կըկատարեն. Արիթէ ոյ աւետարանն ձեր հոգին կենդանացնող աղբիւր է։ Արիթէ էսպէս է. ապա հաստատ և պինտ կացէ՛ք նորանում, և նը ամէնից ազնիւ վարդապետուէներ և խօսքերըն հենոյ ձեր սրտի մէջ գրեցէ՛ք. նորանց անդադար կատարեցէ՛ք և նորանց վը մտածեցէք. ինչու որ նորանք իրաւունք են տալիս ձեզ որ յաւիտենական կեանքն ժառանգէք և ստանաք։ Աղօթք և աղաչանք արէք։ Էն առաջին որ կարողուէ տոյ ձեզ իմանալ էն իրան աճայլին վարդապետուէ խորհուրդներն. մինչև որ լուսով իմանաք նորանց, և ինքն յա՛ քանն փառաւորվի ձեր սրտերումն և ձեր կեանքումն. հետևեցէք նը խոնարհուէ վարքումն. որ նը նման լինելով նը պատկերն յայտնէք ամէն մարդկանց մէջն Ամէն։

Շուշի բերդումն աւետարանական ժողովքի տան մէջն էս հետեւող գրեանքս էլ ծախվումեն։

---

1. Հոր կոչորոն պէտալ 'ի վէնէպէն։
2. Յոհաւորուն էրկանուն։
3. Յոհաւոր էաւգերտ 'ի գրէաւէ յաշխարհաւ։
4. Ընդէրցաւծ 'ի հին կոչորոնէ։
5. Յաւտուն ապաւծոյն վկայուն։ գրէաւ և աշխարհաւ։
6. Պարտուն աւրէ գրոց գրէաւ։
7. Տէրոկ այեւէնակոն։
8. Ամոլ էն կոնոն ապտուն։
9. Ընտ խօսակցուտ ին տհանայ ին աշխարհակոն մարդոյ հէպն։ աշխարհաւ։
10. Ամէսորոնէ պօրուտ կոտ ին արէ ծաւայ պարտուտ։ աշխարհաւ։
11. Յոհաւոր տնուն։ էրիսոնէակոն հաւապոյ և մահիպակոն կրօնէ։ աշխարհաւ։
12. Շատ հարկաւոր հարցմունէնէր։ աշխարհաւ։

13. Յուսանելէ վերջն. աշխարհաբար։

14. Կարճաւոր աղօթքներէ շաբաթէ ամէն մէկ օրէն համար աշխարհաբար։

15. Արեղէ մեծանալոյն և պօրանալոյն համար. աշխարհաբար.

16. Արեղն խաղ անելոյ բան չէ. աշխարհաբար։

17. Յարդարմանէ առաջ ասօղ մարդկանց համար. աշխարհաբար։



20/III